Կարծիք

(պաշտոնական ընդդիմախոս ք.գ.դ., պրոֆ. Գ. Քեռյան)

Է.00.02- «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու համար **Աստղիկ Սերգոյի Հայրապետյանի <<ԱՄՆ-Ի արտաքին քաղաքականությունը Մերձավոր Արևելքում (2000-2008 թթ.)>>** թեմայով ատենախոսության վերաբերյալ

Աստղիկ Հայրապետյանի ատենախոսության թեման արդիական է, որովհետև Հայաստանի Հանրապետության արտաքին և անվտանգային քաղաքականության մշակումը հրամայաբար պահանջում է համաշխարհային ուժային կենտրոնների և հատկապես ԱՄՆ-ի մերձավորարևելյան ռազմավարության գիտական հետազոտության հենքով բազմակողմանի իմացություն: Այն հնարավորություն կտա առավելագույնս ճիշտ կանխատեսել քաղաքական զարգացումների ընթացքը և հետևանքները Հայաստանին հարևան տարածաշրջանում: Այս հանգամանքը հրատապ է դարձնում թեմայի շուրջ գիտական ուսումնասիրությունների իրականացումը, հիմնախնդրի ուսումնասիրության ինչպես գիտական այնպես էլ մեթոդաբանական ասպեկտները: Պետք է նկատի ունենալ նաև, որ ժամանակակից միջազգային քաղաքական գործընթացներում Մերձավոր Արևելքը շարունակում է պահպանել կոնֆլիկտայնության բարձր աստիճանը, հատկապես արաբա-իսրայելական հակամարտության Գազայի հատվածում ընթացող ներկա պատերազմի պատճառով: Իմ համոզմամբ, առանց թիվ մեկ գերտերության արդի արտաքին քաղաքականության հայեցակարգային ուղղությունների և դրանց կիրարկման գործիքակազմի իմացության, անհնար է անվտանգության ապահովման համակարգում արդյունավետ դիվանագիտությունը, որի առաջնահերթ խնդիրն է ստեղծել արտաքին բարենպաստ պայմաններ՝ նվազագույն ուժերով երկրի պաշտպանությունն ապահովելու համար՝ ունենալով հնարավորինս շատ դաշնակիցներ և քիչ հավանական հակառակորդներ:

Ատենախոսության նպատակները՝ գիտական են: Ատենախոսը գիտական պատշաճ մակարդակով ուսումնասիրել է 1990-ական թվականներին ԱՄՆ-ի մերձավորարեվելյան

քաղաքականության փոփոխման միտումները: Այս հատվածում առկա է տեսական հետազոտություն ըստ Pax Americana հայեցակարգի միաբևեռ աշխարհակարգի ձևավորման և այնտեղ Մերձավոր Արևելք տարածաշրջանի կարևորության մասին: Կրևոր է, որ հեղինակը բաց չի թողել ԱՄՆ-ի հետսառըպատերազմյան շրջանի մերձավորարևելյան քաղաքականության լեգիտիմացման իրավական հիմքերի հետազոտությունը:

Ժամանակագրական առումով ատենախոսությունն ընդգրկում է 2000-2008 թթ.-ը և միանգամայն ճիշտ է առանձին հետզոտության առարկա դարձնել Մերձավոր Արևելքում «Բուշի դոկտրինի» իրագործումը, որը արտահայտում էր ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականության իրականացման նորպահպանողականների մոտեցումները: Արժևորում ենք այն հանգամանքը, որ այստեղ արտաքին քաղաքականության դոկտրինալ ռազմավարությանը զուգահեռ առանձին ուսումնասիրվել է նաև Բուշի դոկտրինի իրագործման գործիքակազմը և կիրառման ուղղությունները Մերձավոր Արևելքում, որովհետև պետության արտաքին քաղաքականությունը նախորոշվում է պետության քաղաքական կուրսի նպատակներով, հնարավորություններով, հանդես է գալիս, որպես վերջինիս գործիք ու հենք:

Արժևորում ենք հատկապես ատենախոսության այն հատվածը, որտեղ առկա է «ահաբեկչության դեմ պատերազմը» և Իրաքի օրինակով Արաբական Արևելքում «ժողովրդավարության ներդրման» փորձի հետազոտությունը քաղաքագիտական ասպեկտով: Համամիտ եմ ատենախոսի հետ, նա «ահաբեկչության դեմ պատերազմը» որակում է, որպես Ջորջ Բուշ կրտսերի օրոք Մերձավոր Արևելքում ամերիկյան ազդեցության հաստատման միջոց: Սա ճիշտ և օբյեկտիվ քաղաքական և քաղաքագիտական գնահատական է: Այսպիսին է նաև աշխատության վերջին հատվածը, վերնագրված «Ժողովրդավարության ներդրումը» որպես ԱՄՆ–ի տարածաշրջանային քաղաքականության գերակա ուղղություն և վերջինիս առանձնահատկությունները»: Ի դեպ շատ խոսուն է «ահաբեկչության դեմ պատերազմ» և «ժողովրդավարության ներդրում» բառակապակցությունների չակերտավորումը, որն արդեն ընկալում եմ որպես անկողմնակալ և գիտական մոտեցման վկայություն:

ԱՄՆ արտաքին ռազմական քաղաքականության տարածաշրջանային զարգացումներ համատեքստում, գիտատեսական մոտեցմամբ հետազոտվել ու գնահատվել են վերափոխումները, ինչպես նաև իրականացվել է մերձավորարևելյան արտաքին

քաղաքականության բաղադրիչների համապարփակ ու ամբողջական վերլուծություն: Պատմաքաղաքական հետազոտության հարթության մեջ երևում է ամերիկյան դիվանագիտության դերը որպես միջազգային երկկողմ և բազմակողմ համագործակցությունը հաստատող գործիք:

Ատենախոսության մեջ ներառվել են նաև տարածաշրջանային հիմնախնդիրները: Տարածաշրջանի երկրների և հատկապես Իրաքի հետ հարաբերություններն ուսումնասիրելիս հիմնավորվել են հեղինակի կողմից առաջ քաշված հիմնադրույթները ամերիկյան շահերի, ռեգիոնալ նկրտումների, նպատակների և ռազմաքաղաքական պլանների մասին:

Հետազոտությունն ունի հարուստ գիտական և աղբյուրագիտական հենք, օգտագործվել են ԱՄՆ արտաքին քաղաքականության տեսական հիմքերն ու հիմնական սկզբունքները: Դրա զարգացման էվոլյուցիայի ուսումնասիրման նպատակով օգտագործվել են պետական պաշտոնական և այլ կառույցների կողմից ընդունված/հրապարակված փաստաթղթերը: Արտաքին քաղաքականության մերձավորարևելյան առանձնահատկությունները լուսաբանվել են համակողմանի և օբյեկտիվ: Էմպիրիկ ուսումնասիրության արդյունքները զուգորդելով սեփական վերլուծության հետ՝ առանձնացվել են նաև մերձավորարևելյան զարգացումների հիմնական միտումներն ու հեռանկարները:

Ատենախոսության եզրահանգումները գիտական են և բավականին արժեքավոր Հայաստանի պատմական և քաղաքական գիտությունների համար: Ատենախոսական աշխատանքի շրջանակներում իրականացված հետազոտության արդյունքներով հեղինակը հանգել է գիտական բնույթի եզրահանգումների: Ատենախոսության բոլոր հատվածում առկա են թարմ և արժանահավատ գնահատականներ և համեմատություններ:

Ատենախոսությունում առկա են նաև մի շարք թերություններ.

1. Հետազոտության գիտական նորույթը հստակորեն ձևակերպված չէ առանձին դրույթներով, որպեսզի հասկանալի լինի դրա ինչպես տեսական, այնպես էլ կիրառական նշանակությունը: Ատենախոսության մեջ առկա են նորովի մոտեցումներ և վերլուծություններ, որոնք անհրաժեշտ էր

կոնկրետացնել և ձևակերպել լակոնիկ դրույթներով: Սա կարելի է համարել տեխնիկական ձևակերպման բացթողում, սակայն ատենախոսության գիտական գնահատման առումով նման բացթողումը էական նշանակություն ունի:

2. Ատենանախոսությունը վերնագրված է <<ԱՄՆ-Ի արտաքին քաղաքականությունը Մերձավոր Արևելքում (2000-2008 թթ.)>>: Այս ձևակերպումը գիտական և քաղաքական առումներով այքան էլ հստակա չի արտահայտում հետազոտության օբյեկտը և առարկան: <<Մերձավոր Արևելք>>-ը բավականին լայն և ընդգրկուն հասկացություն է և այս տարածաշրջանի պետությունների նկատմամաբ ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության նպատակները էականորեն տարբերվում են: Օրինակ՝ ինչպես կարող ենք նույնականացնել ամերիկյան ռազմավարությունը Իրաքի, Սիրիայի, Հորդանանի կամ Սաուդյան Արաբիայի նկատմամբ: Բացառված է, որ մեկ թեկնածուական ատենախոսույթյունը հնարավորություն տար ընդգրկելու ԱՄՆ արտաքին քաղաքականությունը մերձավորարևելյան բոլոր երկրների նկատմամբ: Եթե հեղինակն ընտրել էր միայն Իրաքը կամ արաբա-իսրայելական հակամարտությունը դա պետք է արտացոլվեր վերնագրի մեջ:

3. Ատենախոսության մեջ առկա են անդրադարձներ Ջ. Բուշ կրտսերին նախորդած՝ առավելապես 20-րդ դարի երկրորդ կեսի, ինչպես նաև հաջորդած նախագահների մերձավորարևելյան քաղաքականությանը և նույնիսկ Թեոդոր Ռուզվելտի և Վուդրո Վիլսոնի արտաքին քաղաքականության սկզբունքներին՝ այդ կերպ ժամանակագրական շրջանակում ներառելով նաև 20-րդ դարի առաջին երկու տասնամյակները: Նման ժամանակագրական էքսկուրսները ինչ որ առումով շեղում են հետազոտության թեմայից, որովհետև 2000-2008 թթ. իրադրությունը տարածաշրջանում և ամերիկյան ռազմավարությունը համեմատելի չեն 20-րդ դարի առաջին երկու տասնամյակների հետ: Բավականին ծավալուն են նաև անդրադարձները 1960-70 –ական թթ., և 1990-ական թթ.-ին, որոնք

միջազգային քաղաքական առումով նույնպես համեմատելի չեն, կապված ՌԴ ղեկավարներ Ելցինի և Պուտինի արտաքին քաղաքականության հսկայական տարբերությունների հետ: Եթե Ելցինը ԱՄՆ-ը այլևս չէր դիտարկում որպես հակառակորդ, ապա պուտինյան վարչակարգը 2000-ական թթ. սկզբից մինչև օրս առճակատման մեջ է Արևմուտքի հետ, մի հանգամանք, որը կանխորոշում է նաև Վաշինգտոնի մերձավորարևելյան ռազմավարությունը:

4. Ատենախոսության մեջ առկա են ծավալուն հատվածներ նվիրված ԱՄՆ արտաքին քաղաքականության տեսական/դոկտրինալ ուղղությունների լուսաբանմանը, հատկապես նորպահպանողականությանը: Սա իհարկե օգտակար մոտեցում է, հատկապես ԱՄՆ-ին նվիրված հետազոտությունների առումով, որովհետև արտաքին քաղաքական դոկտրինների ընդունումը ամերիկյան քաղաքական մշակույթի անբաժան մասն է: Սակայն հեղինակի ուշադրությունից վրիպել է 2002թ.-ի սկզբին Ազգային անվտանգության գծով ԱՄՆ նախագահի օգնական **Կոնդոլիզա Ռայսը** իր ելույթները, որոնցում նա ձևակերպեց <<ռեժիմների փոխման>> ռազմավարությունը: Այն նախատեսում էր ճնշման միջոցառումների (այդ թվում՝ ուժային) ձեռնարկում այն երկրների կառավարությունների փոխման նպատակով, որոնց քաղաքականությունը վտանգ է ներկայացնում միջազգային անվտանգության համար: Օգտակար կլիներ նաև մինչ Բուշի վարչակարգը կիրարկված <<լիբերալ էքսպանսիոնիզմի>>, <<նեոգլոբալիզմի>> և <<հումանիտար ինտերվենցիաների>> դոկտրինների լուսաբանումը, որոնք Բուշի դոկտրինի հիմքն են:

5. Ուսումնասիրությունից վրիպել է նաև <<Արաբական գարուններ>>-ի քաղաքական տեխնոլոգիան, որի հետևում նույնպես ամերիկյան ներկայությունն էր:

6. Եզրակացությունը ցանկալի կլիներ, որ ունենար նաև հետազոտության արդյունքներից բխող կիրառական առաջարկություններ, որոնք կարող էին օգտակար լինել ՀՀ արտաքին քաղաքականության ոլորտի գործադիր և օրենսդիր մարմինների համար:

Որպես պաշտոնական ընդդիմախոս գտնում եմ, որ նշված թերությունները չեն գցում **Աստղիկ Սերգոյի Հայրապետյանի <<ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը Մերձավոր Արևելքում (2000-2008 թթ.)>>** թեմայով ատենախոսության գիտական արժեքը և այն համապատասխանում է Է.00.02- «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու համար ատենախոսություններին առաջադրվող պահանջներին:

Քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ.Մ.Քեռյան

քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ.Մ. Քեռյանի ստորագրությունը հաստատում եմ ԵՊՀ գիտական քարտուղար,

բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ Մ. Հովհաննիսյան

«25» հունիսի, 2024 թ.